

# Month of Lent – **Medz Bahq**

What is *Medz Bahq* and what's its purpose?
Do other Christians observe lent?
Do other religions have a similar observation?


**Get in touch with your clergy**
> derkarnig@sourphagop.com

**Interested in a subscription**
> eglise58@sourphagop.com



**Sourp Hagop Armenian Church**

# newsletter

Vol. 1 No. 1 | **MARCH 2007**


This year, the 40 day observation of *Medz Bahq* is from February 19 – March 31 (between Paregentan and Palm Sunday 'Dzaghgazart')

### What is the purpose of *Medz Bahq*?

A time designated by Christian churches as a unique period for self examination, a search for spiritual values and for spiritual renewal.

By voluntarily depriving ourselves from material pleasures, we make a conscious effort to dwell on our spiritual values.

### What are the customary dietary rules when observing *Medz Bahq*?

Most people who observe *Medz Bahq*, give up eating all animal products (meats from all sources, butter, milk, eggs, cheese, etc.)

Some people choose to observe *Medz Bahq* throughout the 40 days; others do it only on Wednesdays and Fridays; others may give up specific things like desserts or drinks; or others may choose whatever they feel is a material pleasure for them.

*Note that observing the dietary restrictions without accompanying kind deeds, renders the observation of* Medz Bahq *useless.*

## Special messages

**In the Armenian church, during the *Medz Bahq* period, the mass of each Sunday has a special message.**

### The 3rd Sunday of *Medz Bahq*

March 4, 2007

All who have the courage to acknowledge their mistakes are forgiven by God, because he has unconditional love for all humans.

–
THE PRODIGAL SON
(ANARAGI GIRAGI)

### The 4th Sunday of *Medz Bahq*

March 11, 2007

We are all accountable to God for the talents we have been given, and how we use them. Do we use our talents for our own benefit only, or to benefit God, by helping others?

–
THE STEWARD
(TNTESI GIRAGI)

### The 5th Sunday of *Medz Bahq*

March 18, 2007

Perseverance is rewarded.
Be it perseverance in our daily lives or in our prayers to God.

–
THE JUDGE
(TADAVORI GIRAGI)

### Advent Sunday

March 25, 2007

Contemplation on Christ's mission on earth and his promise to return.

–
ADVENT SUNDAY
(GALSTYAN GIRAGI)

### Compline* Service



During *Medz Bahq* every Wednesday at 7:00 p.m. there is a special short service at the church called ***Hesgoum***.

The aim of this service is to create an atmosphere for meditating in our spiritual search.

*Night prayer

### What is Mitchinq?

Mitchinq literally means half-way. Half-way through the 40 day lent period; this year the half-way point is on March 14.

Families gather around the supper table with the satisfaction of having accomplished half of their voluntary deprivation.

Some of the more complicated "*bahq* meals" are served at Mitchinq. It is also customary to serve a special bread with a coin hidden in it, bringing luck to the happy recipient.




Palm Sunday 'Dzaghgazart' > April 1

All children are invited to the Palm Sunday Procession 'Tapor' at 11 am

**Did you know that… during *Medz Bahq* the curtains of the altar remain shut and no wedding ceremonies may be performed.**

**Do other religions have similar periods of self-examination accompanied by fasting?** Yes. Muslims observe Ramadan and Jews observe Yom Kippur.



**Why are the 40 days called Lent?**
Lent is derived from the Old English word 'Lenten' meaning ***spring*** and lencten from Germanic which relates to long perhaps referencing to the lengthening of the day in spring. This is something unique to English. In almost all other languages its name is a derivative of the Latin term Quadragesima, for "***40 days***" which is to commemorate Christ's fasting in the wilderness for that period of time.

### Schedule of Services for March

| | | |
|---|---|---|
| **Sunday** | 9:30 | Divine Service |
| | 11:00 | - Holy Mass<br>- Sunday School |
| **Monday** | 20:00 | Choir Rehearsal |
| **Tuesday** | 10:00 | Ladies Bible Study (Kuyreru Joghov) |
| **Wednesday** | 19:00 | Hesgoum<br>*March 07, 14, 21, 28* |
| **Thursday** | 11:00 | Sunrise Service |
| **Saturday** | 19:00 | Youth Bible Study |

*Please note this is a simplified explanation of the events in the Armenian church for the month of March.*



# ՄԵԾ ՊԱՀՔ


Հոգեւոր Հովիւին ե-նամակի հասցէն՝
> derkarnig@sourphagop.com

Մեզի հետ կապ պահելու համար՝
> eglise58@sourphagop.com



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

# Տեղեկատու

Ա. ՏԱՐԻ | ԹԻՒ 1 | ՄԱՐՏ 2007


## ԱՐԵՒԱԳԱԼ ԵՒ ՀՍԿՈՒՄ

Մեծ պահքի շրջանին, Հայաստանեայց առաքելական եկեղեցին իր հաւատացեալներուն կը հրամցնէ աղօթքի եւ ինքնամփոփման խորհրդաւոր արարողութիւններ: Այս արարողութիւնները կը կրեն Արեւագալ անունը՝ երբ կը կատարուին Արեւածագին, ինչպէս անունը ցոյց կու տայ, եւ Հսկում՝ երբ կը կատարուին երեկոյեան ժամերուն:

**Արեւագալի երգի մը մէկ համարը·**

«Արեւելքէն մինչեւ Արեւմուտք, Հիւսիսէն Հարաւ, աշխարհի ազգեր եւ ցեղեր, փառք տուէք արարածներու արարիչին, որ այսօր աշխարհի վրայ ծագեցուց արեգակին լոյսը»:

**Հսկումի երգի մը մէկ համարը·**

«Շնորհէ՛ մեզի, Տէ՛ր, այս գիշեր՝ խաղաղութիւնդ երկնային, եւ սուրբ խաչիդ ամենայաղթ զօրութեամբ՝ մեզ հեռո՛ւ պահէ թշնամիին պատրանքներէն: Ո՛վ Տէր, զիս փրկող Աստուածը, օր ու գիշեր քեզի կ'աղաղակեմ: Ընդունէ՛ իմ աղօթքս, Տէ՛ր, ակա՛նջ տուր հեծեծանքիս: Պահապան մը ղրկէ մեզի, Տէ՛ր, որ պահպանէ մեզ ամէն ժամ:

| | | |
|---|---|---|
| Կիրակի | 9.30 | Ժամերգութիւն |
| | 11.00 | - Ս. Պատարագ |
| | | - Կիրակնօրեայ Դպրոց |
| Երկուշաբթի | 20.00 | Դպրաց Դասի փորձ |
| Երեքշաբթի | 10.00 | Քոյրերու Ժողով |
| Չորեքշաբթի | 19.00 | Հսկում *07, 14, 21, 28* Մարտ |
| Հինգշաբթի | 11.00 | Արեւագալ |
| Շաբաթ | 19.00 | Հայ Երիտասարդներուն՝ Ս. Գիրքի սերտողութիւն |

## ՄԵԾ ՊԱՀՔԻ ԿԻՐԱԿԻՆԵՐԸ

### 3-րդ Կիրակին
**4 Մարտ 2007**
### ԱՆԱՌԱԿԻ

Բոլոր անոնք որոնք իրենց սխալները կ'ընդունին, ներում կը ստանան Աստուծմէ որովհետեւ Աստուած մեզ անսահման սիրով կը սիրէ:

### 4-րդ Կիրակին
**11 Մարտ 2007**
### ՏՆՏԵՍԻ

Մենք հաշուետու ենք Աստուծոյ՝ մեր բոլոր կարողութիւններուն գործածութեան համար: Արդեօք մենք մեր կարողութիւնները միայն մեզի՞ համար կը գործածենք, թէ նաեւ Աստուծոյ փառքին, Եկեղեցւոյ պայծառութեան եւ ուրիշներուն օգնելու համար ալ:

### 5-րդ Կիրակին
**18 Մարտ 2007**
### ԴԱՏԱՒՈՐԻ

Յարատեւութիւնը կը վարձատրուի: Ըլլայ այդ մեր կեանքին, թէ մեր աղօթքներուն մէջ:

### 6-րդ Կիրակին
**25 Մարտ 2007**
### ԳԱԼՍՏԵԱՆ

Խոկանք Քրիստոսի այս աշխարհի վրայ ունեցած առաքելութեան եւ Եկեղեցւոյ եւ մեր անձնական առաքելութեան մասին, մինչեւ Քրիստոսի խոստացեալ երկրորդ Գալուստը:

## Խորհրդածութիւններ Մեծ Պահքի մասին

Մեծ Պահքի քառասնօրեայ շրջանը հոգեկան վերանորոգութեան առիթ մըն է: Մեծ Պահքը գիտակցօրէն ապրիլ կը նշանակէ.

Ա. Աղօթքը դարձնել մեր կեանքի կեդրոնական առանցքը: Աղօթել առանձնապէս եւ հաւաքաբար

Բ. Պահք բռնել՝ ինքնազրկումի սկզբունքով

Գ. Բարիք գործել՝ ծառայութիւններ մատուցանելով:

## Միջինք

Մեծ պահքի ճիշդ կէսը յատկանշող օրը կը կոչուի Միջինք: Այս օրը երկարատեւ պահքի շրջանին կէսը նուաճած ըլլալու աւետումն է եւ ուրախութեան առիթ կը համարուի: Սեղաններ կը սարքուին պահքի յատուկ ուտելիքներով:

Հին աւանդութիւն էր, որ Միջինքի օրը տուներէն ներս պատրաստուէր բաղարջ կոչուած հացը որուն մէջ կը պահուէր մանր երկաթեայ դրամ մը: Երբ տեղի կ'ունենար ընտանեկան հաւաքոյթ, հացը մաս առ մաս կը բաժնուէր եւ բոլորին ուշադրութիւնը կը կեդրոնանար՝ գտնելու համար տարուան այն բախտաւոր անձը, որուն հացի բաժնին մէջէն պիտի ելլէր երկաթեայ դրամը:








## Փակեալ խորան

Մեծ պահքի շրջանին, եկեղեցիներէն ներս խորանները կը մնան փակ, բացի Ծաղկազարդի Սուրբ Պատարագի պահէն:

### 7-րդ Կիրակին
Ապրիլ 1, 2007
### ԾԱՂԿԱԶԱՐԴ

Մանուկներու Թափօր ժամը 11.00-ին: Ընդունինք Քրիստոսը Մանուկներու պէս: